



ԷՇՄԻԱԾՆԻ ԱՎԵՏԱՐԱՆ 1000 ՏԱՐԻ

ԱՐՏԱԶԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԷՇՄԻԱԾՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Զեռագիրը ամեն մի ժողովրդի հոգևոր և կյուրական մշակույթի ամենայտաճագին հուշարձանն է, որովհետև առավել շատ հետքեր է պահպանում անցյալի քաղաքակրթություններից: Այն բարդ և բազմադիմի հուշարձան է, զանազան գիտությունների, արվեստների, արհեստների և հրմտությունների միագումարության արգասիք, որոշակի ձևով, գրչությամբ, բովանդակությամբ, համապատասխան գեղարվեստական հարդարանքով, հիշատակարաններով և գոյատևման իր լուրահատկություններով: Ի տարբերություն մշակույթի կարծրանութ հուշարձանների (հողի տակ թե վրա), որոնց վրայով ժամանակն ինքը է անցնում, փակիկանութ ձեռագրերը իրենք են անցնում ժամանակի և տարածության միջով և ավելի շատ կորցնում են (եթե բոլորովին չեն կորչում), քանի ձեռք բերում նորոգմամբ և հիշատակարանների տեսքով: Այս ճամապարհով, նրանք նոր շերտեր են ավելացնում եղածի վրա, վերամարմնավորվում, որպես բարդ հուշարձան: Ուստինահրողը գգուշությամբ պետք է քացահայտի կուտակված շերտերը, դրանցից «ազատի» և վերստեղի ձեռագրի

նախնական վիճակը, որից հետո միայն ըստ ամենայնի ուսումնասիրի սաբողջական հուշարձանը, եթե նույնիսկ այդ պահին հետաքրքրում է նրա տարրերից կամ բաղադրիչներից մեկը: Այս եղանակով միայն լիալիտար պատկերացում կարելի է կազմել և միջնադարյան հուշարձանի և այն ստեղծող բնագավառի՝ գրչության արվեստի մասին, և ճիշտ գնահատել հուշարձանի նշանակությունը ժողովրդի պատմության ո մշակույթի մեջ:

Ամեն մի ձեռագիր ոչ միայն անցյալի և իր ժամանակի մտածողությունն ու պատմությունն ամբարտ հուշարձան է, այլ նաև իր ասրած տարիների, անցած դժվար ճամապարհի կենդանի վկան:

Այդպես են մանավանդ հայերն ձեռագրերը, որոնցից շատերը այսօր միակ հայախոս վկան են իրենց ծննդավայր գյուղության կենտրոնի՝ երթեմնի ծաղկած հայունների, բարգավաճ մշակութային կենտրոնի, վանքի, գյուղի, քաղաքի, որոնք հիմա դարձել են խրված Հայունների, կործանված վանք, ավերված գյուղ՝ անշունչ, անանուն: Շատ ձեռագրեր մասնակից են եղել հաջողությունների փառարա-

նության, կառուցումների հավակատիքի, կնունքի, պատկի, գալագանատվության: Եղել են նաև ավերածությունների ականատես, եղենագործությունների զոհ, կրել գերության տառապանքը, կորուստների ցալը, հոշոտվել, հաշմվել, կազմահան ու թերթակորուս քայլել դաբերի միջով և էջերում պահած զանձը հասցրել մեր օրերը: Հայերեն ձեռագրերը բաշանել են իրենց ստեղծող ժողովրդի ճակատագիրը, որի պայացուցն է նաև ձեռագրական սփյուռքը:

«Մեր ազգային ամենամեծ հարստությունը, որ ժառանգություն ենք ստացել մեր հայրերից, ձեռագրերի ժողովածուներն են: Եվ որպան ենք, որ այդ հարստության ամենամեծ մասը գտնվում է մեր Հայրենիքում», գրել է Գարեգին կթղ. Հովսեփյանը: Հիրավի, ձեռագրական վիթխարի կորուստներից հետո մեզ հասած ավելի քան երեսուն հազար ձեռագրերի ամենամեծ հայքածուն սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանն է, տասնմեկ հազար ամբողջական ձեռագրերով և երեք հազար պատառիկներով ու հմայիլներով: Սուրբ Էջմիածնի Մայր Սթորի մատենադարանի հազարանց հավաքությունը հետ միասին այն կազմում է աշխարհի հայերեն ձեռագրերի «մեր ազգային ամենամեծ հարստության» մոտավորակել կեալ:

* * *

Մինչև տասներորդ դարը գրության թվականով հայերեն ութ ավետարան ունենք (արդքան էլ՝ թվականն անհայտ): Առաջին երկուսը՝ Մլքե թագուհու՝ 862 թ. (Վենետիկ № 1144/86) և Լազարյան՝ 887 թ. (Մատենադարան № 6200) ինենրորդ դարից են, մնացած վեցը՝ տասներորդ դարում են գրված. Երկուսը Հայատանի սահմաններից դորս են գտնվում՝ Թարգմանչած 966 թ. (Բաղթիմոր-ԱՄՆ), Ծովողութի՝ 974 թ. (Վրաստան), մյուս չորսը՝ Մաշտոցի անվան Մատենադարանում (Աշոտ Հայոց Սպարապետի՝ 909 թ. (№ 6202), Սանասարյան՝ 985 թ. (№ 7735), Սքանչեագործ՝ 988 թ. (№ 8906) և Էջմիածնի՝ 989 թ. (№ 2374): Այս մարգարտաշարի ամենաերիտասարդ շահիուդան Էջմիածնի ավետարանն է, որի հագրամբն լրանում է այս տարի¹:

¹ Այն Ս. Էջմիածնի Մայր Սթորի մատենադարան է մոծվել Նախիջևանի գտնադի Շամբինի Մարդու Ս. Ստեփանոս Նախավկա վանքից,

Էջմիածնի ավետարանը հայերեն բոլոր ձեռնություններից տարբերվում է փղոսկրյա կազմով (որի պատճառով կոչվում է նաև «Էջմիածնի փղոսկրյա կազմով ավետարան») և զույգ էջերը նկարազարդ երկու թերթերով, որոնք պատկանել են ավելի հին մատյանի: Նախորդների համեմատությամբ աչքի է ընկնում «յառողջ և ի հին արթինակաց» ընդօրինակված լինելով, գրատեսակների բազմազանությամբ, գեղարվեստական զարդարվածությամբ և դրանց շերտերով, ավարտուն հիշատակարանով, ամբողջականությամբ և լավ պահպանությամբ:

Այս հատկանիշների համար ձեռագիրը դեռևս միշնադարում ընդօրինակվել է որպես «ընտիր և ստուգ» օրինակ, կոչվել «Մաղարդայի Ս. Նախավկայի նշանավոր աւետարան», իսկ Էջմիածնին տեղափոխվելոց հետո՝ «Էջմիածնի աւետարան», միավոր Սուրբ Աթոռի մատենադարանի հազարավոր ձեռագրերից, որ կրում է «Էջմիածնի» մականունը: Էջմիածնում ձեռագիրն արդեն գրավում է հայագետների ու արվեստաբանների ուշադրությունը: Ս. Բրոսսեն, ապա Դ. Շահնազարյանը տալիս են ձեռագրի նկարագրությունը², արվեստին անդրադառնում են Ս. Ուվարովը, Վ. Ստասովը, 1891 թ. Յ. Ստրժիգովսկին առանձին մենագրություն է նվիրում Էջմիածնի ավետարանին³, իսկ Ֆ. Մալլերը Փարիզում 1920 թ. հրատարակում է լուսատիպ նմանահանությունը⁴: Հետագայում ձե-

ներսև Սահարակեցի կաթողիկոսի 1847 թ. ապրիլի 17-ի կոնդակով, մատենադարանավայրը Հովհաննես Շահնաթունյանի շանթերով և Մակար վրդ. Պետրոսանի ձեռագրը (Ս. Սեղբակյան, Ցովնաններ Շահնաթունյանցի կննագրությունը, Ս. Պետերբուրգ, 1898 թ., էջ 127, 179),

² «Մայր ցուցակ մատենից գրադարանի Սրբ Աթոռուն Էջմիածնի (կազմեց՝ Դանիել Շահնաթարյան), ծախսից Յակոբայ վարժապետ Կարեննանց», Թիֆլիս, 1863, էջ 16: 222 համարի տակ կարդում ենք. «Անտարան, երկաթագիր, մեծադիր, փղոսկրեայ կազմի, գրեալ ի մագաղաթի ի սույգ և ի հին օրինակաց, ի վայելումն տևան Ստեփանեսով՝ շինողի և նորոգողի Նորավանք անուանեալ, ի տէրութեան Սթարակ Աշակցին, ի հայրապետութեան Գրիգորի: Գործեորդի Վարժամն գնեալ ընծայեալ է ի Մաղարդավանս Սըրբոյն Ստեփանեսով Նախավկայի, ի Ցովնաննես, ի թոին Հայոց ՆԼԸ (989) ըստ թույզ Հռոմց Չևը, յիսմայելակամ բունակութեանէն ԶՀԹ, ի սկիզբն ի Վերջն, գտանի լիշտավարան»:

³ J. Strzygowski, Das Etchm'adzin-Evangeliar.—Wien, 1891: (Թարգմանություն, Վիեննա, 1892 թ.):

ուագրին անդրադառնում են Վ. Լազարելը, Լ. Կուրնևլյոն, Ս. Տեր-Ներսեսյանը⁴ և ուղիւնելու:

Չեռագիր հուշարձանի ուսումնափրության հիմնական առբյուրը ինքը ձեռագիրն է՝ ձեռվ, գրանցութով, գրով, բովանդակությամբ, մանրանկարչությամբ, կազմով ու հիշատակարաններով:

Հիշատակարանները, որ գրվում են ձեռագիրը գրվելոց հետո և հրա գոյատևման ընթացքում, դատմում են ձեռագրի առեղջման և դեգերումների պատմությունը. տեղեկություններ են հաղորդում ոչ միայն ձեռագրի գրչության հանգամանքների, այլև ժամանակի կարևոր իրադարձությունների մասին:

Ոչ բոլոր ձեռագրերն են, որ ունեն հիշատակարաններ. հնագույնները չեն ունեցել, իսկ հնտագայում գրվածների մեծ մասը ժամանակի ընթացքում կորցրել է դրանք, որովհետև հիշատակարանները տեղակորությամբ են լինում ձեռագրի վերջուն: Էջմիածնի ավետարանը, քարերախտարար, պահպանել է իր հիշատակարանը: Ուստի սկսենք նրանցից: Հիշատակարանը գրված է ստացողի՝ Ստեփանոսի անունից, Հովհաննես գրչի ձեռքով, որը նախ փառանվում է վանքի հիմնարկողը և միարանության հաստատողը, Սյունիաց Հայկացան իշխանական տոհմից, Ստեփանոս կրոնավորը, որն իր հրուելքային էր, և որի աշակերտներից մեկն է Եղել ինքը: Նրա մասին կարդում ենք. «...զոր եւ իմն պատկաւոր և հարազատ, մաքրութեամբ մարմնոյ և խաչակիր նահատակութեամբ թողեալ զիայրենական զշեղութիւնն քանոն կրանից միանձնաց եղեալ, յերկրի զանամարմնոցն բերեալ արինակ՝ նոցին եղեւ հաղորդ, թողլով երկրի իրայցու աշակերտելոց արինակ գնացից կենաց պողոտային եւ սանդուղ ի Վերին Միուլն, զանուանեալ նորս վան՝ հիմնարկեալ ի սմազվարան նոյնանուն իր Արքոյ նախավկային Ստեփանոսի»⁵:

Սյունիաց տան պատմից Ստեփանոս Օրելյանը ավելի հանգամանորեն է պատ-

⁴ F. Macler, L'Evangelie Arménien, édition phototypique du manuscrit № 229 de la bibliothèque d'Echmiadzine, Paris, 1920.

⁵ Ս. Տեր-Ներսեսյան, Էջմիածնի ավետարանի մկրի թերթից մանրանկարների թվականը (Գյուղ 1933 թ.) նոյնի, 7-րդ դարի հայկական մանրանկարչությունը և Էջմիածնի ավետարանի մանրանկարները («Հայ ավետար միջնադարում», Երևան, 1975, էջ 31—55 և 56—68):

⁶ Մատունադարան, ձեռ. № 2874, էջ 880ա:

մում իրողությունը: Վանքի հիմնադիր Ստեփանոսի հայրը՝ Գևորգը, Սիսական իշխանական տոհմից էր: Անումնանում է, զավակ ունենաւ, հետո թղթանում է աշխարհական կյանքը և հոգևորական է դաստիամ: Ծառայում է Մաշտոց Եղիսաբեդում, նրանից հետո տեղափոխվում է Երից վանք, որտեղ և մահանում է ու թաղվում:

Գևորգի որդի Ստեփանոսին մասնկոց ուաման են տախու աստվածային ծերերի մուտ: Նա կատարելության է հասնում գիտականորեն ու գործնականորեն և կոչվում քահանապահական աստիճանի: Ապա փափագերով աստվածային մի գործի՝ կամենում է եկեղեցի շինել և այսուեղ կրոնավորների միաբանություն ու սպասավորների դասեր հաստատել... Կատարի վանքի հակառակ կողմլի... Հրամատ իշխանի օծանուակությամբ եկեղեցի է կառուցում, ավելացնում եկեղեցական զավթեներ, սրբներ ու կրոնավորների թեակարաններ: Նավակատիքի է բրամբում Սյունիաց եականրպու Տեր Հակոբին, որը սահմանում է միաբանություն և շրջակա բոլոր վայրերը որպես կաղմածք հատկացնում եկեղեցուն: Վանքի դիմաց հիմնում են բրոտանցները... և այսպես ամեն տեսակ հարմարանքներով և կարծ ու կանոնի հաստատումով վանքը ծառկեցրեց հայոց երեք հարցուր ություն հինգ (936 թ.) թվականին⁷: Այս իրողությունը հաստավում է վերշերս գտնված վիմարձանագրությամբ⁸:

Հիշատակարանում նորավանքի տեղը նշված չէ: Օրելյանը այս հիշում է նախ հաստվածի վերնագրում «Բղեն զավառի Նորավանքի կառուցման մասին» (Վասն շինութեան նորավանքից որ ի գատափին Բղենոյ), ապա՝ շարադրանքում. «Կատարի վանքի հակառակ կողմլը, մի շատ գեղեցիկ ու վայելու տեղ է գտնվում երկու ծորերի միջն հարթ մի լեռնարազկի վրա»:

Իր վանական նորամիմն հաստատությունում «ինքը՝ երանելի, մարդկանց մեջ

⁷ Ստ. Օրելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 221:

⁸ Ս. Բարխուդարյան, «Էջմիածնի ավետարանի» գրչության վայրը, «Բանքի Մատունադարանի», № 4, Երևան, 1958, էջ 47:

⁹ Ստ. Օրելյան, նոյն տեղում: Կատարի վանքը գտնվում է արևմտյան Բաղրի (Աճանան) Բելս գյուղի դիմաց, Բղեն զավառը՝ Տաթևից հյուսիսարևելք, Օրոտան գյուղ աջ կողմուն: Երրեմն Տաթևն էլ է մոտել այդ զավառի մեջ («Դիման նայ վիմագրության» պ. 2, Երևան, 1960, էջ 42):

անհամեմատելի Ստեփանոս էլ, առաքի-
նաշամ վարբուզ շատ տարիներ ապրելով
ու հրեշտակակրոն առաքինությամբ ան-
մարժիներին մարմնի բնելով և կյանքը
պարզեւով ճարանց՝ մեռավ 970 թ.¹⁰:

Նորավանքի հիմնարկությունից առաջ
վերակառուցվել էր Սյունյաց միտրոպոլի-
տության ներ և անշոր առօռ Տաթևը: 895
թ. հիմքն է դրվում Տաթևի նոր՝ Պո-
ղոս-Դեմորու առաքելոց եկեղեցու և կից
շինությունների, որոնք ավարտվում են
տասնմեկ տարի անց, 906 թվականին: Այդ
ժամանակ Տաթևը «բոլոր վանքերից հաշ-
նավոր էր ոչ միայն շինություններով, այլև
փայտով էր շորջ հինգ հարյուր միարան-
ների կրոնավորական դասերով: Լի էր
խրաբնին փիլիսոփաներով, երաժիշտ եր-
գիշներով, ճնիս էր վարժարանը վարդա-
պետական կրթությամբ: Կային նաև ան-
համեմատելի արվեստավոր նկարիչներ ու
գրիչներ»¹¹:

Ստեփանոս կրոնավորը Նորավանքը
հիմնելիս, անշոր, աչքի առաջ ուներ
միտրոպոլիտ Տեր-Հովհաննեսի կառուցած
Տաթևի վանական միարանության օրինա-
կո, որին հետևելով հիմնեց իր կրոնավո-
րանոցը և, ի տարբերություն Հին Տաթևի,
այն անվանեց «Նոր վան» նույնափակ
դպրոցով, աշակերտներով, նկարիչներով
ու գրիչներով:

Նորավիմն Նորավանքի դպրոցի աշա-
կերտներից էր նրա հիմնադիր և առաջին
առաջնորդ Ստեփանոսի եղբորորդի Ստե-
փանոսը: Սա փոխարինում է իր հորեղբո-
րը և պատմիրում մի ավետարան Նորա-
վանքի արդեն իր դպրոցի աշակերտների
ութերքանության համար: «Խակ ես՝ յետին
և ամենանուաստ Ստեփանոս մոլորական
կրանաւոր և անարժան քանական, նորին
աշակերտ և եղբարորդի ոչ ըստ նորին
արինակի, աղ լուծ մեղուցեալ, որ թէսէտ
և ըստ սին եւ սնուսի խարկանաց կեն-
զաղոս Համբակեան գոր ասէին զիս, աղ
եւ ըստ ճշմարտութեան, որում են վկա-
նեմ հեծ անենան և վատրաք եւ ետին քան
զամենան մարդիկ՝ ըստ շատ գործոց եւ
անուղղաւ գնացից իմոց, սակաւ քրիս-
տոնեայ ող և զինը արեան մեծին Աս-
տուծու Յիսուսի Քրիստոսի ոչ ուրանամ
զիս:

Եւ արդ մեծաւ տարիմամբ ցանկացաց
գույն գիսամափառ չորեքծագեան հոգե-
ություն տասու սրբոց անտարանացն ի
ուստի գերարդի վայելչութեան եկեղեցոյ,

ի ամա պարելոց մանկաց նոր Սիովնի...
որք ընթեռնուր զամ... յիշման արժանի
արացիք զտարժանեալ մեղաւք զիոգի
իմ»¹²:

Ստ. Օրբելյանը Ստեփանոս քահանայի
մասին գրում է. «Անուիթեսն Նորավանքի
միարանության առաջնորդությունն ստամձ-
նեց» նույն Ստեփանոսի եղբորորդի Քրիս-
տափորը՝ այդ սուրբ հոր աշակերտը՝ ամ-
բողջովին նմանվելով իր ուսուցչին»¹³: Սյունեղ, հավանաբար, Քրիստոսի ա-
նունը շփորչված է Ստեփանոսի հետ:

Ինչպես տեսնում ենք, Էջմիածնի ավե-
տարանի գրչության կենտրոնի հիմնադիր
Ստեփանոսը և նրա եղբորորդի Ստեփա-
նոսը՝ պատարանի ստացողը, Համբակուն
իշխանական տան ժառանգներից են, ո-
րոնք 9—10-րդ դարերում ժառանգարար
իշխում էին Սյունիքի հյուսիս-արևմտյան
մասի Գեղամա ծովի շորջը գտնվող շր-
ջանների վրա¹⁴: Այսպիսով Սյունաց Հայ-
կազուն իշխանական տոհմի ներկայացու-
ցիչները միտրոպոլիտական աթոռ Տաթևի
վարդապետանունց ոչ հեռու, նույն գավա-
ռում հիմնում են Նորավանքի եղբարա-
նոցը՝ դարանոցով, որտեղ նույնպես եղել
են «անհամեմատելի արվեստավոր նկա-
րիչներ», ինչպես Տաթևում:

Վկա՝ Էջմիածնի ավետարանը:

* * *

Էջմիածնի ավետարանը կազմված է
29,5×34,6 մմ մեծության մագաղաթյա
շատ լավ մշակված հասան թերթերից, բա-
ցառությամբ մի քանիսի, որոնք մատղաշ
անասունի մորթուց են պատրաստված և
շատ նորը են: Արանք հաճախ թանաքը
ծծում են և հաջորդ էջը տեղ-տեղ անգրել
է մնում, իսկ 227թ էջը ամբողջությամբ է
անգրել: Յուրաքանչյուր ութ (կամ չորս ի-
րար կից) թերթերից կազմված է պրակը: Պրակի առաջին թերթի ա էջի վերին լու-
սանցից կենարունում նշանակված է սրբ-
անական՝ երկարագործությամբ՝ Պրակները նշա-
նական են հայոց այրութենի հերթակա-
նությամբ և ոչ նրանց թվային արժեքով,
ուստի ձեռագիրն ունի Ա.—Ռ (28) պրակ,
որն նավասար է 224 (28×8) թերթի: Ա.
պրակից սկսվում է Մատուռուի ավետարա-

¹² Մատենադարան, ձեռ. № 2374, էջ 230ա—
230թ:

¹³ Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 222:

¹⁴ Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը,
Երևան, 1966, էջ 52, 53: Հմտ. Դիվան հայ վի-
մագրության, պր. 2-րդ, էջ 41—44:

¹⁰ Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 222:

¹¹ Նույն տեղում, էջ 22—28:

ըլ: Ա. պրակին նախորդում է ութ թերթանց մի պրակ ևս, որը հենում սովորաբար չէր պրակակալվում, որովհետև այն ավետարանից դուրս էր: Այն պարունակում է Եվլեքիոսի՝ Կարպիանոսին ողղված ժողովը, նույն կազմած համարարքար, ինչպես նաև տերուական նկարներ: Ուստի ունենք $224+8=232$ թերթ կամ 29 պրուկ: Այս եղել է ձեռագրի սկզբնական թերթաբանակը: Վերջին 232-րդ թերթը, ինչպես երևում է, անգրել է եղել, և անշատել են: Երբ ձեռագրի մեջ երկու նկարագրդ թերթ է մուծվել, բնականարք, ձեռագրին ավելացել է երկու թերթով, որոնք մուծված են վերջին Ռ-րդ պրակի մեջունում, և որի պատճառով ութ թերթանց պրակը դարձել է տասը թերթանց, և թերթաբանակն էլ հասել ($232+2=$) 234-ի: Ինչպես նշեցինք, վերջին պրակի վերջին թերթը չկա. ուստի այժմ վերջին պրակը տասի փոխարեն ունի 9 թերթ, և ձեռագրի թերթերի իրական քանակը ($234-1=$) 233 է: Սակայն վերջին թերթի վրա գրված է 232 (մի թերթով պակաս): Թյուրիմացությունը էջմիածնում ձեռագրի թերթերը մատիտով համարակալողից է գալիս, որը 155 համարը գրելուց հետո, 156-ը հաջորդի վրա դնելու փոխարեն, հշանակում է հրանից հետո եկող թերթի վրա և մի թերթ մնում է համարակալված¹⁵:

Սակատարանի հիմնական գիրը երկաթագիրն է երկայում գրությամբ: Գրադաշուի մեծությունը $28,4 \times 9$ սմ է, միջնառուանցքը՝ 2,2, վերինը՝ 3,5, արմատինը՝ 2,5, կողքի լուսանցքը՝ 6,8, իսկ ստորինը՝ 8,7 սմ, որը ցրվացանկը գրելու համար է, և ունի 6 նեղ տողեր: Յուրաքանչյուր էջ ունի 20 տող, որոնք, ինչպես և սունագձերը, արված են ճնշումով:

Զեռագրի առաջին թերթի գուգ էջերը (1ա, 1ր) գրալեցնում են Կարպիանոսին ուղղված Եվլեքիոս Կեսարացու Թուղթը գրված շքեղ խորաններում, աղյուսակ օրուի: Հաջորդ յոթ խորաններում (2ա-5ա) տեղափոխված են համարարքարի տապար (Ա-Ծ) կանոնները: 5թ-ում տաղաւանութիւնն է յորս սուններով: Յամ խորանում Քրիստոսի նեարն է՝ Պողոս-Պետրոս առաջաւելերի հետ. 6թ-7ա խորաններում ակտարամիններն են՝ գուգ-գուգ կանգնած, ռազմած մատանները ձախ ձեռքեռում, 7թ-ում Սատիածամայրը Մանկան հետ. 8ա-ում Առքամի գոհաբերությունը:

¹⁵ Թերթաբամարները շնախատելու համար այդ թերթերն ունեն այսպիսի էջակալում. 155 (ա, թ), 156ա, 156թ, 156զ, 156դ: Նշանակում է 156ա-156թ էջերը բաց մնացած թերթինն են:

Ել: Տր-և անգրել էջ է եղել, որ հետագայում ձեռագրի գնաման հիշատակարանն է գրված:

Թա-ի վերին լուսանցքում մանրագիր սեւտարան ըստ Մատթեոսի: Լուսանցքի կանորներում Ա. պրականին է՝ գրված վրձինով: Հավանաբար նկարչի գործն է, որ նույնպես ցոյց է տապիս, թե նկարիցն ու գործը միասին են աշխատել նոյն վայրում:

Մատթեոսի ավետարանն ավարտվում է 71թ էջում: Մարկոսի ակտարանն զրայիցներում է 72ա-111թ 2-րդ սունակը: Ղոկասի ակտարանը՝ 111թ-2-րդ սունակ-176թ:

Յովհաննու ակտարանը՝ 177ա-222ա, որին հետևում է՝ «Փառք Սուրբ Երրորդութեան յափունու ամէն», «Յովիսաննեւու գրեցի աղաշեմ լիշել զիս», հիշատակագրութունները, որոնցով էջն ավարտվում է:

Հաջորդ էջն անգրել է թանաքը ծծերու պատճառով: Այս թերթով կիսվում է պրակը¹⁶:

Մյուս թերթը մկանվում է «Յիշատականուն» մանրագիր խորագիր ունեցող գրչիուր հիշատակարանով: Հիշատակարանները սովորաբար մկանվում են «Փառք»-ով, բայց պատեղ «Փառք» չկա: Բանեն այն է, որ «Փառք» արդեն գրվել էր ձեռագրի վերջում¹⁷: «Փառք»-ով փառաբանվում էր Սուրբ Երրորդությունը, որ ևսորությունը էր տվել գրչին կամ հետինակին ձեռագիրը կամ ատեղծագործությունը ավարտելու: Հետագայում այն դատնում է ձեռագրի Հիշատակարան մկիզք, որ ուրագալ փառաբանվում է Սուրբ Երրորդությունը ավարտի համեմունքությունում տպու համար:

Հիշատակարանին (230ա-231ա) հաջորդում է «Ակտարանացուցը» կամ «Տանաօտցը» առանց խորագրի (էջ 231ա-232թ): Մրանցով ավարտվում է ձեռագիրը:

¹⁶ Այստեղ հետագայում մուծվել են մանրանկարված գույց թերթերը՝ փրկված 6-րդ դարում առևողծված ձեռագրից, որոնք կրում են 228, 229 թերթաբամարները:

¹⁷ Հնագոյն ձեռագրերը հիշատակարան չեն ունենում: Նրանք ավարտվում են «Փառք» մի հայադարձակում իրենց անոնքը դրոշմել Ա. Գրքում: Այդպես է վարվի նաև Մեսրոպ Մաշտոցը, որի արտագրած ձեռագրի մասն կարդում ենք. «ասէին ատեղութեան գրեալ ձեռամբ սրբուն Մատթեոսի վարդապետի և թարգմանչի» (ձևութեան Նո 10434, էջ 287ա):

* * *

Էջմիածնի ավետարանն ունի Եվսեբիոս Կևարացու համարարքառն ու հատածումները: Սուազինը տեղավորված է Ակքում, գեղեցիկ նկարապարփած խորանների մեջ, երկրորդը՝ բնագիր լուսանցքներում: «Թիւք» կամ «գլուխք»-ը նշանակված են գլուխների դիմաց, լուսանցքում, մանրագորգ, լորաքանչյուր ավետարաններ առանձին, ներթական համարակարգով: Ստորին լուսանցքում լորաքանչյուր էջի համարարքառն է դարձյալ մանրագորգ, որոնք կոչվում են «ցրուացանկը»:

«Ավետարանք գիշաւորքը»-ը (երեսմն՝ «Նշանագիրք», «Անթերցուաճք») սկսվում են մեծ գիշագրով, որի դիմաց դրվում է քածանարարը՝ մոտավորապես կրկնակի պատվանշանի ձևով: Սրանք հետագայում փիխարինվում են լուսանցքապարերով, ինչ գիշագրերը զարդագրերով: «Տումք»-ը սկսվում են նոր տողից, գրության տառից մի քիչ մեծ գրերով և ավարտվում ավարտանշաններով: Վերջապես՝ «Վայութինք»-ը, որոնք Հին Կոտակարանից քաղվածքներ են: Սրանց տողերի դիմաց, լուսանցքում, դրվում են տղրկիկներ կամ ստորակետի նշաններ:

Մեր ձեռագործում վկայությունները հերթական համարներով նշված են միայն Վեհափառի ավետարանում, (պահպանվել են վկ. Ա.—վկ. ԺԱ. համարները):¹⁸

Հովհաննես գրիչը ձեռագիրը գրելով ստուգ և հին օրինակներից, պահպանել է ընթօրինակության հետագույն ձևը, ալիսնքը՝ «Տեսր ընդ տեսրի, թուղթ ընդ թողթ, տող ընդ տողի, էջ ընդ էջի և այլ ամենայն որպիսութեան արհետն՝ որպես նոյնն»¹⁹ ինչպես կարդում ենք ընտիր օրինակից արտագրված ձեռագիր մի հիշատակարանում և շատ ակնառու տեսնում Վեհափառի և մյուս հնագույն ավետարաններում²⁰:

¹⁸ Ա. Մարթուան, Վահափառի ավետարանը, Եջմիածնին, 1978, Ե, էջ 34—48:

¹⁹ Բ. Ասրդիալյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագործ, Միհիթարեան մատենադարանին, ի Վեհափառի, Բ. Ա., Վեհետիկ, 1914, էջ 784:

²⁰ Որ Հովհաննես գրիչն արդպես է ընտօրինակել, երևում է ամեն մի էջից, որ սյունակի շրջանակներում չտեղավորված տողի ավելացրած տառը ոչ թե տեղափոխվում են հաջորդ տող, այլ նոյն տողի շարունակություն են դառնում լուսանցքում փոքրացած կամ տողից վեր՝ տողամիջում:

Պահպանված են գաղափար-օրինակի լուսանցքագրությունները, որոնց մի մասն առնված է շրջանակների մեջ, մյուսը՝ ոչ: Այս ապացուց է, որ գրիչն օգտագործել է մեկից ավելի օրինակ, և լուսանցքագրությունների տարրեր ձևերը դրա հետևանքը են²¹:

Հովհաննես գրիչը վարժ և հմտու արվեստավոր է եղել: Ամրող ավետարանը գրել է շատ կանոնավոր երկաթագրութեամբ, միագիծ տողի վրա (և ոչ զուգ տողերի միջև), հավասար բարձրությամբ, առանց բառանշատման, բացի բացատներից և կետերի տեղերից: Տողագծերը միմյանցից 1 ամ հեռավորություն ունեն: Ավելի մեծ երկաթագրութեամբ է գրել տնագրուինները, որոնք սկսվում են առ տողից: Արանցից մեծ են բնթերցվածների կամ գլխավոր ավետարանների երկաթագրերը, իսկ ավետարանների ակքնատառերը խոկապես գիշագրեր են, զարդագրին նմանվող: Խնչապես այս վերջին, այնպես էլ ընթերցվածների գիշագրերը որոշ ոճավորում ունեն: Մի կամ երկու ծարերից գծված են շատ նուրբ արմագենիկներ: Արանցով, նաև ավետարանների վերնագրերն ու ավարտագրերը շրջափակող գծիկներով ավարտվում է Հովհաննես գրչի կատարած զարդարանքը: Թվերի կամ գլուխների համարների, ցրվացանկի, սրբագրությունների, ինչպես նաև Ավետարանացուցի գրության համար գրիչն օգտագործել է և աղյուսակ գիր, և բոլորագիր, և շղագիր. փաստուն ան բոլոր օրատեսակները, որ ստեղծել է Մեսոռա Մաշտոցը: Այս տեսակետից Էջմիածնի ավետարանը բոլոր գրաւեսակների 10-րդ դարում ու նրանից առաջ օռոծածված իններու լավագույն փաստունից է:

Հովհաննես գրիչն օգտագործում է զուգ և նետ, որպես ավատուակետ, երեսմն էլ նրան նզեռով տորկեակ՝ հորիզոնական, մի և նետ, որ դրվում է տողի մեջտեղում կամ մեռնում, որպես վերնակետ, նաև ստորակետ: Բացականչական նշանը դրվում է

²¹ Խնչապես հայտնի է, հետագայում այդ լուսանցքագրությունները մուծվում են բնագրում, փոփոխություններ են տողի ունենում առողակության ու կետադրության նշանակման մեջ: Սակայն զաղափար-օրինակի նշանակությունը միշտ մնում է գերադասելի: Դրանցից հետագայում սրբագրում նմ ձեռագրերը: Հայտնի են Սաղմոսարանի՝ Սարկավագի, ապա Հովհաննես Գառնեցու և Վարդան Արեւակըցու սրբագրությունները, Ավետարանի՝ Գրիգոր Մուրալանցու, Աստվածածնչի՝ Գևորգ Ակեւացու և այլ սրբագրությունները:

բացականշվող վաճեկի համապատասխան գրի վրա, իսկ պատվագրված քառերում պատվի վրա: Ի նախորդի վրա դրվում է երկու կետ, որիշի խոսքի դիմաց՝ տղրկիկ: Այս վերջինը օգտագործվում է նաև միալր ցուց տարու և սրբագրությունը նշելու համար:

Գրություններից երկում է, որ Հովհաննեսն օգտագործել է տարրեր լայնության մի քանի գրիշներ՝ եզն ավարտելու համար: Դա շատ ցանուն երկում է մասնավորապես Ավետարանացուցի գրության մեջ:

Ավետարանացուցը կամ Տոնացուցը ծիսական գրականության երկերից է, որ նշված են տոները և տոնական ծիսակատարությունները: Էջմիածնի ավետարանում պահպանված հնագույն նմուշն է, որին նրանց առաջ եղած ավետարաններում չենք հանդիպել²²:

Զետագրի առաջին արժանիքը, ինչպես ցվում է հիշատակարանում, «քատոր և ի հին յարինակաց» արտագրված լինելն է:

Սուրբ Մեսրոպ թարգմանչի «ձեռամբ գրեար» ավետարանն ընդորինակում էին «մանաւեղ վասն ստուգութեան և ընտրութեան բանի, և հրամանի, և տնհատի, և ամենայն արուեստի»²³: Այդպիսին էր վերաբերունքը նաև Սահման Պարթևի ընդորինակածի նկատմամբ («ի ստոր և լրնտիր զաղափարէ Մերոյն Սահման թարգմանչի»)²⁴: Արանք էին ավետարանի ընտիր և ստոր օրինակները մինչև 10-րդ դարը:

Ինչպես ցուց տվեց Էջմիածնի ավետառանի մասնակի համեմատությունը Մեսրոպ Մաշտոցի գաղափարից ընդորինակած ավետարանի հետ, դրանք համաձայն են միմյանց, որինմն նոյն շառավիդին են պատկանում:

1427 թվականին գրիչ Գրիգոր Արծեցին ավարտում է մի ավետարան «ի գատիս Շամբի ձորոյ, ի մենաստանի» որ մականությ Մաղարդայ վանք կոչի... ի լաւ և լրնտիր արինակի...»

²² Ցուցակում նշվում են տոներ, համապատասխան ավետարանի անունը (մանրագիր), կատարված քաղվածքի սկզբը ու վերջը:

Սկզբը. 281թ, «ի տասներորդ ժամու եղանեն ի բնվանցն և ընթեռնու: (Սովորական մեծության գիր) ավետարան ըստ Ղուկաս (մանրագիր). Եւ նովիք էին ի տեղուց վերջին (մանրագիր). Որպես և պատմեցաւ նոցա»:

²³ Մատենադարան, ձ. № 10434, էջ 286թ:

²⁴ Մատենադարան, ձ. № 6764, էջ 20ա:

Ահա և մի սրբագրություն (ոչ թե ընդօրինակություն) Մաղարդա վաճեթ ստուգ օրինակներ, որ կատարվել է 1636 թվականին:

Սյունիաց Արիստակես բարունապետը Բոնակորթ գուղում մի ավետարան է գրել տախի Մաղարդա վաճեթն նվիրելու համար: Պարզվում է, որ այն սխալաշատ է, այնպես որ «վասն սխալութեան սորս ոչ արժանի համարեցաք կոչել զանուն գծողին»²⁵, գրում է հիշատակագիրը և շարունակում. «Եւ ես... Աստուածառոր... իրիցուկ ծառայ Արիստակես վարդապետի, և նրամանա սորին բազում և խիստ աշխատութեամբ սրբագրեցի զաս»: Դրանից հետո միայն նվիրում են ձեռագիրը Մաղարդա վաճեթն... «Ես Արիստակես վարդապետս եսու լիշտակ զսուրք Աւետարան Շամբա ձորոյ ի դուռն Ո. Աստուածածնին... Ո. Ստեփանոս Նախավկան»²⁶:

Սույն ձեռագիրը (Մատենադարան, № 2656) համեմատնեցնք Էջմիածնի ավետարանի հետ, իսկ վերջինս՝ Մեսրոպան գաղափարից կատարված ընդորինակության հետ:

Համեմատությունից պարզվեց նաև, որ Էջմիածնի ավետարանը իմաստեան ընդորինակած է Մեսրոպան ստուգ և նին օրինակի շառավիղներից, կամ այն եղել է գաղափարներից մեջը²⁷, և ապա՝ որ Աստվածառությ Բոնակորթում գրված ավետարանը «քազում և խիստ աշխատութեամբ» սրբագրել է Էջմիածնի ավետարանի հետ համեմատելով²⁸:

Այս ցուց է տախի վերջապետ, որ Բղեն Նորավանքը, հիրավի, եղել է գրչության արվեստի մի հզոր կենտրոն՝ հարուստ մատենադարանով, առաջնակարգ 25 Գրչի անունը, որ նիշվում էր 225թ էջում, ջննակը են:

²⁶ Մատենադարան, ձև. № 2656, էջ 288ա, 225թ:

²⁷ Զետագիրը երբեմն արտագրում կամ սրբագրում էին մի քանի օրինակից: Ավագ գրիչը նիշում է Սահմանին, «զի շնորհնաց մեզ օրինակ ընափետրի... զամանելն... որ, կրկին այլ արինակ, որ ստոյգեցաք, զկարապետ քահանայն, որ միս արինակ այլ շնորհնաց, որ կոչի Մուրդանցի... Ցործամ աւարտումն հասաւ, եղաք զերիս ընափետրի և անուանի աւատարանը և ստոյգեցաք որ միս շառավակաց էին գրած» (Մատենադարան, ձև. № 280, էջ 264թ, 1810 թ.):

²⁸ Քանի որ Մեսրոպան (10434) և Էջմիածնի (2874) օրինակները նոյն շառավիղից են, քաղվածքը քերում ենք մեկ անգամ, որի սկզբում դառն № 10434, իսկ վերջում՝ 2874 ձևագրերի էջերը:

գրիշներով և Ակարիշներով, որտեղ ոչ
միայն տարրեր ստուգ և հին օրինակների
համեմատությամբ ձեռագիր ընդօրինակե-
լու, այլև ճշգրիտ համաբարքան և սրան-
չելի նկարաշար կազմելու և փարպետորեն
կատարելու, հնարավորություն են ունեցել:

* * *

Էջմիածնի ավետարանը 10-րդ դարից
մեջ հայունի հայերեն ամենափառահետև
նկարազարդված ձեռագիրն է, որի ծառ-
կողի անունը հայունի չէ: Հովհաննես գրի-
չը ավետարանի նկարիչն չէ: Բանն այն է,
որ խորանների գիրը շատ տարրեր է գրչի
գրքածած բոլոր գրատեսակներից: Ակզրի
պրակը, որի բոլոր թերթերի երկու երես-
ներն են նկարազարդ են (քացի վերջին
էջից), իսկ 1ա, 5ա էջերը նաև գիր ունեն,
որից արվետագետի գործ է:

Հովհաննեսի մոտ աղյուսակ գրի տար-
րերը սուր կամ բոլոր անկյան տակ են
միանում միմյանց՝ նորիզոնական նուրբե-

Քաղվածքում ընդգծեցինք այն բառերը, որոնք
բացակայում են Բոնակորի ավետարանում, և
Աստվածատուրն ինքն է մոծել կամ տողամիջում,
կամ լուսանցքում, կամ եւ քերել-չնշկով սրբա-
գրել է:

Ճ. № 10434, № 2374,
1069 թ. 989 թ.

249ա Բազում ինչ ունիմ
վասն ձեր խաւուզ

262ա Այժմիկ դատաստան և
աշխարհին պատրիկ,
այժմիկ իշխան աշ-
խարհին պատրիկ
ընկերացի պատար

261ր Վասն իմ ինչ 206ր
եկն (լուսանցք.) եղաւ

261ր Հայր փառաւորեա
զանոն թ (լուս) զորդի

Ասլ. ցնա Յիսոս լուացելոյն 208ր

263 չ: ինչ սիսոս, բաց զի զոսոս

264ա լուանացլ, բանգի ամենենին
սուրը է, և դոր սուրը էր, այլ
ոչ ամեներին

267ա Պարեն 211ա

267ա Բանն իմ զոր 211ա

271ր Զայս առակար 214ր
խաւուզաց

274ա Եւ Յուղայի առեալ 217ա
ընդ իր զգունին

բով: Տարբեր գրություն ունեն Ա. Յ. Զ. Զ. Հ
գրերը: Տաղկողը օգտագործում է աղյու-
սակ զրի մի տարատեսակ, երբ երկար և
կարճ մասնիկները ոչ թե նորիզոնական
նուրբերով ուղիղ անկյան տակ են միա-
նում իրար, այլ՝ նորիզոնական նուրբերի
ծայրերի փոքր կորությամբ: Սրանք նույն-
պես տարբերվում են երկաթագրից նրա-
նով, որ երկաթագրի նուրբը ամբողջովին
կոր է: Տաղկողն օգտագործում է միան
մի կետ, Հովհաննեսի բազմակենտության
դիմաց:

Տաղկողը կամ նկարիչը ձեռագրի վրա
գրչի նետ աշխատել է միաժամանակ: Նրա
վրձնին են պատկանում մկրի ութ թեր-
թերի խորանները, նկարները, գրություն-
ները և թերեւս նաև ամբողջ ձեռագրի
պրականիշ տառերը, որոնք երկաթագրի
են և գրված են վրձինով՝ լուրացանչուր
սրբակի առաջին թերթի ա էջի վերին լու-

ճ. № 2657,

1636 թ.

251ա բազում իմշ ունիմ խաւուզ

264ա Այժմիկ դատաստան և
աշխարհին պատրիկ
ընկերացի արտաք:

264ա վասն իմ ինչ եղեւ

263ր Հայր փառաւորեա
զորդի թու

265ր Ասլ. ցնա Յիսոս լուացելոյն
չ: ինչ սիսոս բաց զի զոսոս
լուանացլ, այլ ոչ ամեներին:

269ա Պանիսացլ. (Խայ-ն քերել է
բոլել է պահէ)

գրան զիմ զոր (գ-երը քերել և
բոլել է բանն իմ զոր)

273ա Զայս խաւուզաց

275ա Եւ Յուղայի առեալ
զգունին. (և այն):

սանցքում: Պրականիշերի շուրջ նյած գունավոր շրջանակները հետագայում են արված, լնդերցվածների շրջանազարդերի հետ միաժամանակ, որիշ ծավալողի կողմից, ամենայն հավանականությամբ ԺԲ դարում:

Ենոագրի առաջին թերթի գույք էջերը զրադեցնում է Եփսերիոս Կառարացու թուղթը՝ ուղղված Կարպիհանոսին (1ա, թ): Ծրեւ խորանի մեջ գրադաշտում գեղեցիկ աղյուսակ գրով և մուգ թանաքով շարադրված է համակը. Ամովս Սղիկսանդրացու... առանց խորագրի և զրադեցնում է 29 (+2 տող քերված): Մյուս էջում շարունակությունն է՝ նույն գրով, բաց դեմնավուն թանաքով և զրադեցնում է 22 տող. ուստի տառերը մի փոքր մեծ են: Պարզվում է, որ թոթի գրիշ-մերարողը առաջին երեար նոյնակես դեղնավուն թանաքով է գրել, բայց սիսալ է թույլ տվել (հավանաբար մի քանի տող կրկնել է), ոոի պատճառով ամբողջ գրադաշտը քերել է, ապա վերնագիրը գրել խորանի վերևում, եթի վերին լուսանցքում, մի տողի մոտ՝ «Եսաւերիոս Կարպիհանոսի աիրելոյ եղբար ի տէր ողջոյն» (ամֆմ նորը սուրբած կտորի տակ ծածկված է): Խնկնամակը գրել է խորանի մեջ՝ քերածի փոքր և թանաքով, ավելի խիտ և համեմատաբար մասր գրով, այնպես որ ներքընից երկու տող մնացել է ազատ, անելիքնագիր: Փաստորեն այս էջը մեզ հայտնի ամենահին կրկնագիրն է հայերեն ձեռագրերի մեջ:

Հաջորդ հինգ էջերում համարարբաղ խորաններն են, որոնցում տեղավորված են Ա.—Ժ կանոնները: Մեզ հայտնի թվագիր հնագույն համարարբառն է սա, որ հաւել է մեզ ամբողջությամբ և արծանացել յուրօք ուսումնակրությամբ համարվելով համարարբաղ հնագույն և ինքնատիպ հմուտներից մեկը²⁹:

Կանոնների խորանը եզրափակում է չորս սուսներից կազմված քեղ տաղականիներ: Խուակների փոքր հանգչում է կորածն կտորը, որին պատկում է երկրագունդ՝ խաչ:

Ուսումնասիրելով Էջմիածնի ավետարանի զարդանկարված կամարները, Ա. Տեր-Ներսեսյանը գտնում է, որ առաջին կան և՛ հայեական, և՛ բլուզանդական ձեռագրենում և ունեն օսրդանկառումն մի ընթանուր ձև. որը նմանվում է Ռարուշակի ավետարանում կիրառվածին: Էջմիածնի

ավետարանի մանրանկարները նմանվում են ոչ միայն 9-րդ և 10-րդ դարերի հաւական, այլ և նոյն ժամանակաշրջանի բյուզանդական ձեռագրերին... որուն նըրանցում երևում են ոչ թե 6-րդ դարի սիրիական մանրանկարներին բնորոշ գծեր, այլ՝ 9-րդ և 10-րդ դարերի հայկական ու բյուզանդական ձեռագրերին հատուկ նկարարություն:

Էջմիածնի ավետարանի մանրանկարները կազմում են ամբողջական մի նկարաշար: Ամենից առաջ պատկերված է Քրիստոսը՝ բազմած գամին, երկու սրբերի միջև, որոնք թերևս Պետրոսն ու Պողոսն են: Հետում են ավետարանիշների, Տիրամոր ու Մանուկի և, ի վերջո, հայակի զոհաբերության նկարները: Այսպիսով նկարների շարքը մկավում է ֆիգորներով. նախ՝ գործ ներսինը, որ Քրիստոսն է, ապա գալիս են հետինակները, այսինքն՝ ավետարանիշները:

Բուն նկարագրդումը ի հայտ է գալիս հաջորդ երկու մանրանկարներում, որոնք ամփոփում են գրքի բովանդակությունն ու խորհրդանշում քրիստոնեական կրոնի և ուստունքի հիմնական երկու սկզբունքները՝ «Աղոյող Տիրամարը մանուկ Հիսուսի հետ», որպես մարդեղության խորհրդանշան, և «Խայակի զոհաբերությունը», իբրև խաչեղության և փրկության խորհրդանշան»:

Էջմիածնի ավետարանի պատմողական, պատմական բնույթի նկարաշարը Ա. Տեր-Ներսեսյանը համարում է խորհրդանշական նկարագրում, որը պետք է Հայաստանում լայն ճանաչում գտած լիներ ավելի վաղ, քան 10-րդ դարը: «Այս հանգամանքը, որ նա շարունակել է օգտագործելու Հայաստանում, նրա արվեստի հնամենի կուրթանը համապատասխանող մի հատկանիշ է... որ Էջմիածնի ավետարանի մանրանկարները ոչ թե արտասկզբ նմուշներ են, այլ, ընդհակառակ, լիովին համապատասխանում են Հայաստանի նկարչական այն ժամանակաշրջանի մանրանկարներ»³⁰:

²⁹ Ա. Տեր-Ներսեսյան, Էջմիածնի ավետարանի սկզբի թերեւերի մանրանկարների թվականը, «Հայապետական միջնադարության մանրանկարների արժեք», Երևան, 1975, էջ 34: Հեղինակը նոյն տեղում ճանորդում է: «Սույն բացարձության համար պարտական ենք արք. Գ. Միլեմին: Տաղավարիկը, հավանաբար, նոյնակը նոյն գաղափարի մեջ է առնչվում, այն թերևս ներկայացրել է արքավայրը, որտեղ կատարվում է զոհաբերությունը»:

³⁰ Նոյն տեղում, էջ 49, 51,

Ծիծու է Ակատում Ս. Տեր-Ներսևայանը, որ մոտավորապես 11—12-րդ դարերից սկսած, հայկական ձեռագրերում ավետարաբեի տեքստը կանոնավորապես բաժանվում էր գլուխների, ընդ որում տրաքանչորս ունենում էր զարդագիր մագրեսատառ, իսկ հարակից լուսանցքում մկարված էր լինում գլխի համարը ցուց տվող մի զարդանկար: Էջմիածնի ավետարանում զարդանկարների անկանոնթյունից ու զարդագիր մագրեսատառների բացակայությունից ելենով՝ հեղինակը գտնում է, որ ձեռագրի ընդօրինակության ժամանակ տեքստը գլուխների բաժանված չի եղել: «Մեզ հայտնի չէ,— գրում է նա, — թե հայերն են ձեռագիր ավետարանները երբ են ծիսական օգտագործման հպատակով ենթարկվել հման մասնատումների: Հնագոյն շրջանի մի քանի ձեռագրերի ուսունասիրությունը ցուց է տավիս, որ 10-րդ դարում այն դեռևս սովորույթ չէր դարձել»³²: Վկաչակոյն է Լազար ան, Մթե թագուհու և Բիրտանական թանգարանի 10-րդ դարի ավետարանները:

Նկատենք, սակայն, որ «Ավետարանի տեքստը կանոնավորապես բաժանված էր գլուխների» նվազերիոս Կեսարացու ձեռքով, և դրանք հշանակվում էին լուսանցքում բաժանարարներով: Լազարյան ավետարանը նույնական ազդակի հշանակումներ ունի, որոնք երևում են նաև լուսատիպ հնանահանության մեջ³³: Հետագայում է դրվել լուսանցքների զարդանկարը աղ բաժանարարի տեղում, նրա վրա, կամ նրա մոտ: Աղդպես է նաև Էջմիածնի ավետարանում. շրջանակները և նրանց մեջ գրված թվերը ԺՄ. կամ հաջորդ դարից են և Հոյինանեւսին չեն պատկանում, ինչպես իրավացիորեն նշում է Ս. Տեր-Ներսևայանը: Բայց բաժանարարներով նշված են գլխավոր ավետարանները Հոյինանեւս գոյք ձեռքով. նրան են պատկանում ինչպես գլխահամարները, այնպես էլ գրիգացիների գրությունները, որոնք գրված են տարբեր գրիշ-գործիքներով: Այդ նոյն գրերով է գրված Տոնացուցը խառն կամ շղագրով, որից հետո էլ Հոյինանեւսը գոյել է վերջին հիշատակազությունը՝ եռկաթագրով, ասաւ ար կազմվում և հանձնվում է Բղենու Նորավանքին «ի վայելուն մանևլանց Նոր Սիրո»:

³² Ս. Տեր-Ներսևայան, Էջմիածնի ավետարանի մկրերի մանրանկարների թվականը, «Հայ պրվատ միջնադարում», Երևան, 1975, էջ 34:

³³ Անետարան, լուսատիպ հնանահանություն, Սովորա, 1899, էջ... 211ա, 214ա, 222ա, 223ա, 224ա, 226ա, 227 ...

Մի քանի խոր զույգ թերթերի մասին. ինչպես ասացինք, այժմ դրանք, որպես միմյանց կից թերթեր, գտնվում են ձեռագրի վերջին պրակի մեջտեղում (228, 229 թերթ): Հնարավոր է, որ դրանք միմյանց հաջորդող թերթեր են եղել, ինչպես երևում է Ակարսերի բովանդակությունից, բայց իրար կից չեն եղել, այսպես դրանք կրկին կից դարձնելու հարկ չէր լինի: Բանն այն է, որ 4—5 ամ լանգություն ունեցող կաշվի երկու կողմերին թերով ամուր կարելով թերթերը՝ կցել են միմյանց և ծալելով կարել պրակի մեջտեղում: Աղումանդերձ, դրանք դարձալ փոքրը են բուն ձեռագրի թերթերից: Մեշտեղի կաշին՝ և մշակմամբ, և՝ տեսրով տարբերություն է թերթերից: Այլ թերթերի լնության է նվիրված Սիրարփի Տեր-Ներսևայանի «7-րդ դարի հայկական մանրանկարչությունը և Էջմիածնի ավետարանի մանրանկարները» ուսումնասիրությունը³⁴: Վերջին երեսուն տարիներին կատարված աշխատանքները, ինչպես և հուշարձանների ու գրական մագրեսադրությունների առավել ուշադիր ուսումնասիրությունների հեղինակին բերել են այն համոզման, որ դեռևս շատ վաղ ժամանակներում հայկական եկեղեցիները զարդարված են եղել կրոնական թեմաներ պատկերող որմաններում³⁵: Այսունետև, թենելով այդ որմաններներն ու մագրեսադրությունները, գիտնականը եզրակացնում է. «Անտարակոյս անհրաժեշտ է հայերին վերագրել այս բաղձրորակ մանրանկարները ու հավատելու, որ դեռ վաղ ժամանակներից նկարառողման արթեստը Հայաստանում ունեցել է հանճարեղ մշակում:

Նշված մանրանկարների առեղծած հետաքրքրությունը դուրս է գալիս տեղական կամ ազգային շրջանակներից, որովհետև որանք վկայում են ավետարանի մկարագրդման մի այնաժմի տիայի մասին, որից այ նմուշ չի պահպանվել³⁶:

Ինչպես տեսանք, Էջմիածնի ավետարանից, որպես ստույգ և ընտիր օրինակից, ընդօրինակություններ և սրբագրություններ են կատարել Մաղարդա Վանքում: Բայց ընդօրինակության արժանի է համարվել ոչ միայն ավետարանի բնագի-

³⁴ Սիրարփի Տեր-Ներսևայան, Հայ արմեսար միջնադարում, էջ 56—63:

³⁵ Նոյն տեղում, էջ 56:

³⁶ Նոյն տեղում, էջ 58:

որ, այլև՝ նկարները... որմերի վրա, որպես որմնաբանդակներ:

Ավետարանը գրվելուց յոթամաստներեք տարի անց, 1063 թ., կառուցվում են այժմ կիսականգում հուշարձաններ, որոնք, «բացի ճարտարապետական ինքնատիպ և բարձրարվեան գործ լինելուց, իրենց զարդարանդակների առասուլուամբ և վարպետությամբ արվեստի մեծարժեք նմուշներ են: Դրանցից առանձնապես հետաքրքիր և ծեռագրի մանրանկարների հնու առավել առնչություն ունեցողները սրբաքանդակներ են», գրում է Ս. Բարիսուդարյան³⁷: Սպա, համեմատելով քանդակներն ու ավետարանի մանրանկարները, Հան Շկատուն է շատ սերտ կապ և նմանություն ոչ միայն նրանց ընդհանուր, կրոնական բովանդակության, այն պոտեների դասավորության, քանդակների և մանրանկարների ֆուների ճարտարապետական և օրնամենտալ ձևավորման, ֆիգուրների մանրամասների անհամաշափության, դիմագծերի սառնության և գորեթե անշարժության մեջ: Երկու դեպքում էլ ֆիգուրների մանրամասները—մատներ, եղունգ-

ներ, մազեր, նույնպես և զգեստների մանրամասներ—մշակված են բծախնդրությամբ, իսկ ձեռագրի մանրամասների ֆուն պայտաձև կամարներով խորանները, միևնույն կումպողիցիսի զուգ ֆիգուրները զուգ խորանների մեջ դնելը, հարդարանքի մեջ մեանդրի զանազան այլաձևությունների օգտագործումը սերտորեն առընչվում են թե՛ բարձրաքանդակներին, թե՛ հուշարձանի մուտքերի կամարներին և թե՛ նրանց շրջանակները զարդարող մեանդրի վերին աստիճանի վարպետորեն քանդակված և այլաձև օրինակներին:

«Ընդհանուր առնամբ,— եզրակացնում է հետինակը,— հուշարձանի պատկերաքանդակները գրաֆիկ ու գրքահն են և մանրանկարից օրինակված լինելու տպավորություն են թողնում»³⁸:

Իսկ հետագայում մուծված թերթերից Մոգերի երկրպագություն նկարից արտահնարկված է հենց Էջմիածնի ավետարանի 10ա էջի ստորին լուսանցքում ԺԲ դարի մի նկարչի ձեռքով: Այդ ժամանակ են կատարված մյուս լուսանցազարդերն ու լուսանցանկարները:

(Ծարունակելի)

³⁷ Ս. Բարիսուդարյան, «Էջմիածնի ավետարանի» գրչության վայրը, «Բանքեր Մատնադարանի», Երևան, № 4, 1958, էջ 48:

³⁸ Նոյն տեղում, էջ 58—59: